ԳԱՐԵԳԻՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՑԱՎԱԿՑԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐԸ ՀՈՒՆԱՍՏԱՆԻ ՕՐԹՈԴՈՔՍ ԵԿԵՂԵՑՈՒ ՍՈՒՐԲ ՍԻՆՈԴԻՆ

Աթենքի և համայն Հունաստանի Օրթոդոքս Եկեղեցու պետ Սերաֆիմ արքեպիսկոպոսի մահվան կապակցությամբ Նորին Սուրբ Օծություն Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը հետևյալ ցավակցական հեռագիրը հղեց Աթենքի և Հունաստանի Սուրբ Սինոդին.

«Սիրելի եղբայրք ի Քրիստոս,

Մենք խորապես վշտացանք՝ լսելով Հունաստանի Ուղղափառ քույր Եկեղեցու պետ Սերաֆիմ արքեպիսկոպոսի մահվան լուրը:

Աղոթք ենք հղում առ Աստված, որպեսզի ընդունի նրա հոգին հավիտենական խաղաղության և երանության մեջ:

Սերաֆիմ արքեպիսկոպոսի ավանդը Հունաստանի Եկեղեցուն միշտ կհիշվի երախտագիտությամբ: Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու և նրա սուրբ կենտրոնի Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի Ամենայն Հայոց կաթողիկոսարանի անունից Մենք մեր խորին ցավակցությունն ենք հայտնում Սբ. Սինոդի նվիրյալ անդամներին, բոլոր եպիսկոպոսներին և հոգևոր դասին, ինչպես նաև Հունաստանի ժողովրդին:

Աղոթում ենք առ Աստված, որ Սբ. Սինոդի բոլոր անդամներին, եպիսկոպոսներին և հոգևորականներին շնորհի երկար կյանք և արժանի ծառայություններ Հունաստանի Եկեղեցուն և ժողովրդին»:

Վեհափառ Հայրապետի բարձր կարգադրությամբ Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի անունից Սերաֆիմ արքեպիսկոպոսի թաղման արարողությանը կմասնակցի Հունաստանի թեմի հայրապետական պատվիրակ և առաջնորդ Տ. Ոսկան արք. Գալփաքյանը:

ԳԱՐԵԳԻՆ Ա ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐ ՀՂԵՑ ԱԹԵՆՔԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ ՀՈՒՆԱՍՏԱՆԻ ՕՐԹՈԴՈՔՍ ԵԿԵՂԵՑՈՒ ՆՈՐԸՆՏԻՐ ՊԵՏԻՆ

Նորին Սուրբ Օծություն Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը ապրիլի 30-ին ԱՄՆ-ից շնորհավորական հեռագիր է հղել Աթենքի և համայն Հունաստանի Օրթոդոքս Եկեղեցու նորընտիր պետ Խրիստոդուլոս արք. Պարասկևայդիսին:

Հեռագրում Վեհափառ Հայրապետն իր և Հայ Առաքելական Եկեղեցու անունից բարեմաղթանքներ է հայտնում երջանկահիշատակ Սերաֆիմ արքեպիսկոպոսի հաջորդը դարձած Աթենքի և համայն Հունաստանի Օրթոդոքս Եկեղեցու հոգևոր նոր պետին և հույս հայտնում, որ Հայ և Հույն երկու Եկեղեցիների բարեկամությունը այսուհետ ևս կշարունակվի:

«Հույն և Հայ Եկեղեցիների ու ժողովուրդների սերտ համագործակցությունը սկիզբ է առնում դարերի խորքից: Նրանք հաճախ կիսել են նույն ճակատագիրը, դիմագրավել նույն դժվարություններն ու մարտահրավերները:

Մենք Ձեզանից ու Ս. Սինոդից ակնկալում ենք, որ այսուհետ ևս կնպաստեք մեր Եկեղեցիների և ժողովուրդների միջև եղբայրական հարաբերությունների և համագործակցության խթանմանը», - ասվում է հեռագրում:

ՄԱՄԼՈ ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ